

**<< ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 3- ՐԴ ՄԱՍԻ 10-ՐԴ ԿԵՏԻ (ՏՆՕՐԻՆՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿԸ և ԴՐԱՆՑ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ) ՊԱՀԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը տնօրինում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի գործունեությանը, մարզպետի աշխատակազմի, մարզպետարանի գլխավոր քարտուղարի և ստորաբաժանումների, ինչպես նաև մարզային ենթակայությամբ գործող կրթական, մշակութային և առողջապահական կազմակերպությունների գործունեությանը վերաբերող տեղեկություններին:

Նշված տեղեկությունները մշակվում են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից և պահպանվում նույն ստորաբաժանումներում կամ քարտուղարության ընդհանուր բաժնում կամ համապատասխան պաշտոնատար անձի պաշտոնական փաստաթղթերում և “Mulberry” համակարգում:

Հրապարակման ենթակա տեղեկությունները տեղադրվում են նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական (vdzor.mtad.am) կայքում: